ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

23 հուլիսի 2026թ. թիվ 800

Ա.ՇԻՐԻՆՅԱՆԻՆ ԵՎ Է.ՀԱԽՎԵՐԴՅԱՆԻՆ
ՏԱՇԻՐ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ, 10-րդ և 22-րդ կետերով, հաշվի առնելով ֆինանսական վարչության պետ Ա.Շիրինյանի և քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի պետ Է.Հախվերդյանի 2026 թվականի հուլիսի 23-ի գործուղման առաջադրանքները՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ.

1. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Աիդա Շիրինյանին և քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի պետ Էդգար Հախվերդյանին ս/թ հուլիսի 23-ին մեկ օրով գործուղել քաղաք Տաշիր՝ համայնքային ծառայողի մրցույթին որպես հանձնաժողովի անդամներ մասնակցելու համար:

2. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Աիդա Շիրինյանին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գործուղման ծախսերի հաշվարկումը և վճարումը:

3. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Աիդա Շիրինյանին և քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի պետ Էդգար Հախվերդյանին՝ գործուղումից վերադառնալուց հետո ինգօրյա ժամկետում ներկայացնել հաշվետվություն գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

7/23/2026

X

ՄԵՐԻ ԴԱԼԼԱՔՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Signed by: DALLAKYAN MERI 5303860493 Մ.ԴԱԼԼԱՔՅԱՆ

2026թ. հուլիսի 23
ք.Վանաձոր